

## Տ. ՄՈՄԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԱՆԱՌԱԿԻ ԿԻՐԱԿԻՒՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(20 փետրվարի 2005 թ.)

*«Զի այս որդի իմ մեռեալ էր՝ ևս եկեաց,  
կորուսեալ էր՝ ևս գտաւ»:*

(Ղուկ. ԺԵ 24)

«Յանուն Տօր ևս Որդոյ ևս Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Միեւնի հավաքացյալներ, մեր Եկեղեցու և յուրաքանչյուր հավաքավոր քրիստոնյայի համար Մեծ Պահքի շրջանն առանձնանում է որոշակի պատասխանատվությամբ, քավչարար սրբագործությամբ, որը մեզ քայլ առ քայլ մտքեցնում է Աստուծո: Աստված Իր կենարար գործությամբ մեր կողքին է այսօր և միշտ և Իր օրհնաբեր ներկայությամբ զորացնում է մեր հոգիները, ամրացնում մեր հավաքը:

Միեւնի բարեպաշտ ժողովուրդ, Մեծ Պահքի յոթ կիրակիներն ունեն իրենց խորհուրդն ու նշանակությունը: Դրանք յոթ հիշարժան օրեր են, որոնցից յուրաքանչյուրը մեզ խորհել է տալիս Քրիստոսի փրկչական վարդապետության մասին, ցույց տալիս այն ճշմարիտ ուղին, որ մեզ տանում է դեպի մեղքերի քավություն, ապաշխարություն, զղջում ու խոնարհություն: Մեր սուրբ Հայրերը դարեր ի վեր Մեծ Խորհուրդ են տեսել Մեծ Պահքի մեջ: Նրանք վկայել են, որ կերակրից հրաժարվելն առանց մեղքից հեղա կանգնելու՝ անօգուտ է: «Մաքանան միշտ պահքի մեջ է, ոչինչ չի ուտում, բայց մեղք գործելուց չի դադարում և չի հոգնում», - ասում է Ս. Գրիգոր Տաթևացին: Իսկ մեր Փրկիչ Հիսուս Քրիստոս Լերան քարոզում Պահքի մասին ասում է. «Եթե ծոմ պահեք, տրտմերես մի լինեք կեղծավորների նման, որոնք իրենց երեսներն են այլանդակում, որպեսզի մարդկանց այնպես երևան, թե ծոմ են պահում, այլ երբ դու ծոմ պահես, օձիբ քո գլուխը և լվա քո երեսը, որպեսզի չերևաս մարդկանց ծոմ պահող, այլ քո Հորը զաղտնաբար, և քո Հայրը, որ տեսնում է, ինչ որ ծածուկ է, կհարուցի քեզ» (հմմտ. Մարթ. Զ 16-18): Մեծ Պահքի կիրակիները խորացնում են մարդու պատասխանատվությունն Աստուծո և իր նմանի հանդեպ:

Այսօրվա կիրակին կոչվում է Անառակի Կիրակի և ընթերցվում է Ղուկասու Ավետարանի Անառակ որդու մասին առակը (տես Ղուկ. ԺԵ): Այս կիրակիի խորհուրդն առանցքվում է մարդ և Աստված հարաբերության մեջ: Մի հարուստ մարդ երկու որդի ուներ: Նրանցից կրտսերը, պահանջելով հայրական ունեցվածքի իրեն հասանելիբ բաժինը, վաճառում է այն և գնում հեռու երկրներ, վարնում իր ողջ ունեցվածքը՝ անառակ ապրելով, և ընկնում է ծայրաստիճան թշվառության մեջ: Սրիպված խոզապահ է դառնում մի հարուստ մարդու մոտ, անգամ փորձում է սնվել խոզերի կերակրով: Այս թշվառության մեջ մտաբերում է, որ իր հայրը անբավ հարստություն ու ծառաներ ունի, որոնք աշխատում են ու կերակրվում իր

հոր մոտ, որոշում է թողնել օտարությունը, զոջում է իր արածների համար և ցանկանում է գնալ հոր մոտ ու ապաշխարել, և վերադառնում է հայրենի աշխարհ:

Անառակ որդու հայրը երբ իմանում է, որ որդին վերադարձել է, շար է ուրախանում, շփապում նրան ընդառաջ և գրկում նրան: Որդին ասում է. «Նայր, մեղանչեցի երկնքի դեմ և թո առաջ, ես արժանի չեմ այլևս թո որդին կոչվելու»: Մինչդեռ հայրը հրահանգում է խըն- ջույք կազմակերպել, առաջին պարամուճանը հանել և հագցնել նրան, մաքանի դնել մաքին ցավ, կորած էր և գրկվեց»: Սակայն նրա ավագ որդին, որ հանդում էր, գալիս է փուն և ցավ, կորած էր և գրկվեց»: Սակայն նրա ավագ որդին, որ հանդում էր, գալիս է փուն և ցավ, կորած էր և գրկվեց»: Սակայն նրա ավագ որդին, որ հանդում էր, գալիս է փուն և ցավ, կորած էր և գրկվեց»: Սակայն նրա ավագ որդին, որ հանդում էր, գալիս է փուն և ցավ, կորած էր և գրկվեց»:

Միտելի հավաքացյալներ, այս քարոզը մեր բոլորիս համար շար ուսանելի է և խորա- խորհուրդ և այն լավ հասկանալու համար փորձենք քննել առակի խորհուրդն ամբողջությամբ: Ահավասիկ անառակ որդու վարքագիծը, նա փորձեց հեռանալ հայրական փնից, գնալ մի ուրիշ աշխարհ, որտեղ իր ուզած ձևով կփորձեր ապրել, հաջորդ քայլը՝ անառակ որդին զոջաց և վերադարձավ հայրենի փուն, և, վերջապես՝ հայրը ներողամիտ գրկվեց, ուրախությամբ ու ջերմությամբ ընդունեց հեռացած որդուն:

Առակի գլխավոր խորհուրդն այն է, որ Աստված ամենուր է: Անառակ որդին փորձեց հե- ռանալ Աստված և կորցրեց ամեն ինչ: Նա վախենց ամեն ինչ, բայց չավելացավ հավաքը, ընդհակառակը, կորցրեց այն, կորցրեց սերը, խաղաղությունը և երջանկությունը: Նա դար- ծավ ապաշնորհ մեկը, որ անգամ փորձեց խոզերի կերակրից սնվել: Նա ապրեց աշխարհիկ կյանքով, ցուփությամբ և անառակության մեջ, սիրեց նյութական աշխարհը և դարձավ ըն- կած մարդ, գրկվեց Աստված շնորհներից: Նիշենք Նակոբոս առաքյալի խոսքերը. «Մերը աշ- խարհի հանդեպ՝ թշնամություն է Աստված դեմ, քանի որ ով ուզում է աշխարհը սիրել, իրեն թշնամի կանի Աստված» (Ղուկ. Դ 4):

Անառակ որդին թողվեց մեղքի մեջ, դարձավ մեղքի ծառ, գործակցեց չարի հետ՝ դրա- նով իսկ իրեն գրկելով բարեպաշտությունից և Աստված շնորհներից: Այստեղ փեղին է հի- շափակել Նովիանես առաքյալի Ընդհանրական թղթի հեփնյալ փողերը. «Մի՛ սիրեք աշ- խարհը, ոչ էլ ինչ որ այս աշխարհի մեջ կա. թե՛ այս աշխարհն է անցնում, թե՛ ցանկությունը, իսկ ով կարարում է Աստված կամքը, մնում է հավիտյան» (Ա Նովի. Բ 15, 17):

Այո, ժամանակավոր նյութական բարեկեցությունը, հաճույքներն անցողիկ են, և եթե փրկենք հաճույքներին, կկորցնենք հավիտենական կյանքը, որին հասնելու ճանապարհը լի է դժվարություններով ու լեցուն փորձություններով: Առակի մեջ կարևոր է նաև այն փաստը, սիրելի հավաքացյալներ, որ որդին հասկացավ իր սխալը, վերլուծեց իր արարքը և փեսավ, որ հեռացավ Աստված ու շար բան կորցրեց, կորցրեց հարստություն, պարփվ, արժանա- պարվություն, բարեկամներ: Ուրեմն այստեղ շար կարևոր է մեղքի գիտակցումը, որը փա-

նում է դեպ ապաշխարություն: Որդին գոջաց, ապաշխարեց, վերադարձավ հոր մոտ և ասաց. «Նայր, մեղանչեցի երկնքի դեմ և թո առաջ, այլև արժանի չեմ թո որդին կոչվելու»:

Միրելի բարեպաշտ ժողովուրդ, Աստված ուղղում է մեր բոլորի ճանապարհները: Ռ՛վ ենք մենք առանց Աստծո, ո՛ր կարող ենք գնալ առանց Աստուծո կամքի և, վերջապես, բազմաթիվ անգամ չենք համոզվել, թե ինչքան անցողիկ է նյութական շահը, հաջողությունը, նյութականի վրա խարսխված կարճապար երջանկությունը: Առակի մեջ կարևոր է նաև այն, որ հայրը ջերմությամբ ընդունեց իր մեղավոր որդուն, ուրախացավ նրա գոջումով և խոսքովանությամբ:

Մեր Երկնավոր Նայրը սիրով ընդունում է մեղավորին, որովհետև Աստծո համար ոչ թե մարդու դատարանն է կարևոր, այլ փրկությունը: Եվ, վերջապես, Նիսուս այս աշխարհ եկավ մեղավորներին փրկելու համար և ոչ թե նրանց համար, ովքեր փրկված են այլևս: Նիշարակներ Դուկաս ավերարանչին. «Ասում եմ ձեզ, թե այսպես ուրախություն կլինի երկրնում մեկ մեղավորի համար, որ ապաշխարում է, քան թե իննսուն և ինն արդարների համար, որոնց ապաշխարություն պետք չէ» (Դուկ. ԺԵ 7):

Այո, Աստված զթասիրտ է և միշտ պարբաստ օգնելու բոլոր մեղավորներին, նրանց, ովքեր անկեղծ գոջալով փնտրում են Աստծո ճանապարհը: Նիշենք Նակորոս առաքյալին, որ հորդորում էր. «Մոտեցեք Աստծուն, և Նա կմերձենա ձեզ: Մեղավորներ, մաքրեցեք ձեր ձեռքերը, երկմիտներ, ուղղեցեք ձեր սրտերը, խոնարհ եղեք Աստծո առաջ, և Նա կբարձրացնի ձեզ» (Նմմբ. Նակ. Դ 8):

Ուստի, սիրելի հավաքացյալ ժողովուրդ, երբեք չհեռանանք մեր Տիրոջից, չհեղանք անցավոր արժեքներին, հեղանք մեր Տիրոջը, լինենք ազնիվ, արդար, երկայնամիտ և աղոթենք Տիրոջը, որպեսզի քավություն և թողություն շնորհի մեզ ամենքիս, քանի որ գիտենք և վստահ ենք ու հեղևող աստվածաշունչ խոսքին. «Զի քաղցր է Տեր եւ յաւիտեան է ողորմութիւն Նորա» (Նմմբ. Սաղմ. ԾԵ 1):

Ուրեմն մենք էլ, սիրելի հավաքավոր ժողովուրդ, ապրելով անառակ որդու գոջման գիտակցությունը, դիմենք առ Աստված՝ ասելով. «Տեր, մեզ ևս մաքրիր և արձակիր մեր մեղքերից, ինչպես որ արձակեցիր անառակ որդուն, և նրա պես արժանի դարձրու Քո ողորմությանը», որով և Քեզ, Որդուն և Մուրբ Նոզուն փառք հավիտյանս հավիտենից. ամեն: